ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ Օրենսգիրք) ընդունվել է 2018թ. փետրվարի 9-ին և գործողության մեջ է դրվել 2018թ. ապրիլի 4-ից: Օրենսգրքի ընդունմամբ ներդրվեց մրցակցային դատավարության այնպիսի մոդել, որի շրջանակներում գործը քննող դատավորը ունի ապացուցման գործընթացը կառավարելու և դատավարության բնականոն ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ, որոշակի և կանխատեսելի գործիքակազմ, ընդլայնվեցին քաղաքացիական դատավարությունում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները, բարելավվեց դատական ծանուցումների ինստիտուտը, մանրակրկիտ կարգավորվեց քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելու փուլը, նախատեսվեցին պարզեցված ընթացակարգերը, հատուկ հայցային վարույթները, հստակեցվեցին վերաքննիչ և վճռաբեկ վարույթների հարուցման հիմքերը, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների լիազորությունները և այլն:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության հինգ տարիների ընթացքում վեր են հանվել և լուծվել Օրենսգրքի պրակտիկ կիրառման արդյունքում առաջացած մի շարք խնդիրներ, սակայն Օրենսգրքի ընդունումից հետո համակարգային և ծավալուն փոփոխություններ Օրենսգրքում տեղի չեն ունեցել:

Այս առումով կարևոր է նշել, որ դատական պրակտիկայի վերլուծությունը, դատավորների շրջանում անցկացված հարցումները վկայում են այն մասին, որ հասունացել է Օրենսգրքում համակարգային որոշ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: Հատկապես արդիական է Օրենսգրքում առկա այնպիսի կառուցակարգերի բարելավվումը, որոնք բարձրացնելու են քաղաքացիական դատավարության արդյունավետությունը, նպաստելու են դատավարական խնայողության սկզբունքի ապահովմանը, «ողջամիտ ժամկետում» գործի քննության իրավունքի իրականացմանը, էլեկտրոնային գործիքների ընդլայնմանը և այլն:

Նշվածի հաշվառմամբ 2022 թվականի հուլիսի 21-ի N 1133-Լ Կառավարության որոշման Հավելված 1-ով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության «Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում» վերնագրված ռազմավարական նպատակի շրջանակներում ևս կարևորվել է Օրենսգրքի կիրառման արդյունքում վերհանված խնդիրների գույքագրման հիման վրա Օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը: Կառավարության նույն որոշման Հավելված 2-ով հաստատված Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի 6-րդ նպատակի 2-րդ և 6-րդ գործողություններով

նախատեսվում է Օրենսգրքի կիրառման արդյունքում գույքագրված խնդիրների հիման վրա Օրենսգրքում և, ըստ անհրաժեշտության, հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտերի փաթեթի մշակում:

Նշված ռազմավարական նպատակի շրջանակներում գույքագրվել և վեր են հանվել Օրենսգրքի կիրառման մի շարք պրակտիկ խնդիրներ, որոնք ներկայացվել են շահագրգիռ մարմինների, դատական իշխանության ներկայացուցիչների կողմից: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառման դատական պրակտիկայի ընթացքում մի շարք թերություններ ու բացթողումների մասին արձանագրվել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներում[1]:

Աջակցություն դատական բարեփոխումներին «Հայաստանում դատական իշխանության անկախության և պրոֆեսիոնալիզմի բարձրացում» ծրագրի շրջանակներում «Քաղաքացիական դատավարության օրենսգրքի որոշ դրույթների՝ եվրոպական չափանիշներին համապատասխանության մասին» պատրաստված կարծիքում նույնպես արձանագրվել է Օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը[2]:

Հարկ է նաև նշել նաև, որ Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման Արդարադատության նախարարությանը վերապահված 5-րդ նպատակի («Դատավարական օրենսդրության վերանայում՝ իրավակիրառ պրակտիկայում ծագած խնդիրների լուծման և դատավարություններում էլեկտրոնային գործիքների ամբողջական ներդրման համար») հիմնավորման մեջ նշվում է, որ Օրենսգրքի ընդունմամբ բարեփոխվեց քաղաքացիական արդարադատությունը, ներդրվեցին մի շարք նոր ինստիտուտներ, որոնք ուղղված էին դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանն ու գործի քննության արդյունավետության բարձրացմանը: Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումներով արձանագրվեցին որոշ նոր կարգավորումների հետ կապված խնդիրներ, և միաժամանակ գործնականում նոր ինստիտուտների կիրառման մասով ի հայտ եկան հակասական մոտեցումներ:

Գործող Օրենսգրքի կիրառման արդյունքում արձանագրված խնդիրները ցույց են տալիս, որ Օրենսգրքի ներկայումս գործող խմբագրության շրջանակներում բազմաթիվ հրատապ խնդիրներ շուտափույթ լուծման կարիք ունեն:

Առավել առանցքային նշանակություն ունեն հետևյալները՝

---

[1] Որպես, օրինակ, կարող ենք նշել ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/28517/02/18 քաղաքացիական գործով 11.01.2022թ., թիվ ԵԴ/30480/02/19 քաղաքացիական գործով 08.04.2022թ., թիվ ԵԴ/4928/02/19 քաղաքացիական գործով 02.09.2022թ. որոշումները այլն:

[2] Տե՛ս Աջակցություն դատական բարեփոխումներին «Հայաստանում դատական իշխանության անկախության և պրոֆեսիոնալիզմի բարձրացում» ծրագրի շրջանակներում «Քաղաքացիական դատավարության օրենսգրքի որոշ դրույթների՝ եվրոպական չափանիշներին համապատասխանության մասին» պատրաստված կարծիքը:

1. քաղաքացիական գործի գրավոր ընթացակարգով քննության պայմաններում գործի դռնփակ պայմաններում անցկացնելու կարգավորումների բացակայությունը.

2. դատական նիստից դուրս դատավորի բացարկի (ինքնաբացարկի) քննարկման հնարավորության բացակայությունը.

3. Վճռաբեկ դատարանի կողմից գործերի ենթակայության և ընդդատության հարցերի կանոնակարգման անհրաժեշտությունը.

4. վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող և չներկայացնող երրորդ անձանց վերաբերող մի շարք կարգավորումների հստակեցումը,

5. դիմումի քննության ելքով շահագրգռված անձի հասկացության և նրա իրավունքների շրջանակի սահմանման բացակայությունը.

5. *դատական ծանուցման ինստիտուտի հետ կապված մի շարք կարգավորումների թերի լինելը, ծանուցման որոշ մեխանիզմների զարգացման անհրաժեշտությունը.*

6. դատական ծախսերի ինստիտուտի կատարելագործումը, մասնավորապես դատական ծախսերի բաշխման հետ կապված մի շարք կարգավորումների վերանայման անհրաժեշտությունը.

7. հայցի ապահովման ինստիտուտի կատարելագործումը.

8. բոլոր դատական ատյանների կողմից դատավարական ժամկետները երկարաձգելու հնարավորության բացակայությունը.

9. հայցային վաղեմության ինստիտուտի բարեփոխումը.

10. արագացված դատաքննության կիրառման հիմքերի հստակեցումը.

11. վերաքննիչ դատարանի որոշումը գործին մասնակից չդարձած անձի կողմից բողոքարկելու հնարավորության ընդլայնումը.

12. տեխնիկական բնույթի խնդիրներ պարունակող բողոքները Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների աշխատակազմի միջոցով վերադարձնելու կառուցակարգի ամրագրումը.

13. Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքների վարույթ ընդունման հարցի հետ կապված պրակտիկ խնդիրների կանոնակարգումը, և այլն:

Նշված խնդիրների լուծման և կարգավորման անհրաժեշտությամբ պայմանավորված մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ), որը ուղղված է պրակտիկայում առաջացած մի շարք խնդիրների լուծման և քաղաքացիական դատավարության արդյունավետության բարձրացմանը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծով առաջարկվող իրավակարգավորումները նպատակ են հետապնդում թեթևացնել դատարանների ծանրաբեռնվածությունը, լուծել իրավակիրառ պրակտիկայում բարձրացված խնդիրները:

Նախագծերով նախատեսվում են հետևյալ հիմնական կարգավորումները՝

1. վերանայել առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտերի շրջանակը.

Նախագծով առաջարկվել է առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտերի ցանկում ներառել նաև լրացուցիչ վճիռը, հայցադիմումի վարույթ ընդունումը մերժելու մասին, լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին որոշումները, քանի որ վերջիններս իրենց բնույթով դասվում են եզրափակիչ դատական ակտերի թվին:

2. Սահմանել դատական վարույթի դռնբաց կամ դռնփակ կարգով անցկացման հնարավորությունը.

գործող կարգավորման համաձայն՝ դատարանը գործը դռնփակ պայմաններում կարող է քննել միայն դատական նիստի միջոցով, մինչդեռ գրավոր ընթացակարգի կիրառմամբ քննվող քաղաքացիական գործերը դռնփակ կարգով քննելու վերաբերյալ կարգավորումներ Օրենսգիրքը չի պարունակում: Նախագծով առաջարկվել է սահմանել, որ դատարանը կարող է իրականացնել գործի քննությունը դռնփակ ռեժիմով նաև գործի քննության գրավոր ընթացակարգի դեպքում:

3. Վերանայել հատուկ կարծիքի տրամադրման կարգը.

գործող կարգավորման համաձայն՝ հատուկ կարծիքը հրապարակվում է դատական ակտի հետ մեկտեղ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հատուկ կարծիքը տրամադրվում է դատական ակտի վերաբերյալ և մինչև դատական ակտի հրապարակումը հատուկ կարծիք ներկայացնող դատավորը ամբողջապես ծանոթ չի լինում դատական ակտի բովանդակությունը, որի վերաբերյալ պետք է տրամադրի հատուկ կարծիք, Նախագծով առաջարկվել է սահմանել, որ Հատուկ կարծիքը հրապարակվում է դատական ակտի հրապարակումից հետո յոթնօրյա ժամկետում:

4. Նախատեսել ըստ ընդդատության և ենթակայության ստացած գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու և ըստ այդմ վեճի ենթակայության կամ ընդդատության հարցի որոշում ոչ միայն վճռաբեկ դատարանի նախագահի կողմից այլև համապատասխան պալատների դատավորների մասնակցությամբ.

Նախագծով սահմանվել է, որ գործի ենթակայության կամ ընդդատության հարցի որոշման համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրվում է նիստ՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և համապատասխանաբար վարչական կամ հակակոռուպցիոն պալատի նախագահների մասնակցությամբ: Որոշումն ընդունվում է Վճռաբեկ դատարանի համապատասխան պալատի դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

5. Վերանայել, որոշ դեպքերում նախատեսել նոր կարգավորումներ գործին մասնակցող անձանց իրավունքների լիարժեք իրացման համար, մասնավորապես՝

5.1. սահմանվել է վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձանց վարույթի մեջ ներգրավելու հիմքերը, նրանց կողմից ներկայացված հայցադիմումի ընդունման, վերադարձման հիմքերը,

5.2. սահմանվել է, որ դատարանի կողմից ծանուցված անձը, ում իրավունքների և պարտականությունների վրա կարող է անխուսափելիորեն ազդել դատական ակտը, կարող է մինչև գործին մասնակցող անձ ներգրավվելը ծանոթանալու գործի նյութերին, ստանալու դրանց պատճենները, գործի նյութերից անելու քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ: Ներկա կարգավորման պայմաններում անձը դատարանի կողմից ծանուցվելով քննվող գործի վերաբերյալ, որով հետագայում կայացվելիք դատական ակտը կարող է շոշափել իր իրավունքները և պարտականությունները, չունի հնարավորություն ծանոթանալու գործի նյութերին՝ հասկանալու համար, թե կան արդյոք գործի քննությանը ներգրավելու հիմքեր: Առաջարկվող կարգավորմամբ նրան տրվում է այդ հնարավորությունը:

5.3. Սահմանել «դիմումի քննության ելքով շահագրգռված անձ» տերմինի հասկացությունը և գործին նրա ներգրավման կարգը, քանի որ գործող Օրենսգրքով նշված հարցերը կարգավորված չեն:

6. Վերանայել դատական ծանուցումների իրականացման հետ կապված մի շարք կարգավորումներ.

Նախագծով լրացուցիչ կարգավորումներ են նախատեսվել, որոնք թույլ կտան արդյունավետ կերպով իրացնել հեռախոսակապի միջոցով դատավարության մասնակիցների ծանուցումը: Մասնավորապես, Նախագծով սահմանվում է, որ դատական ծանուցագիրը հեռախոսակապի կամ ինտերնետ կապի կիրառմամբ ուղարկելը կամ այդ մասին հաղորդելը հնարավոր է, եթե կողմն ինքն է դատարանին տրամադրել իր հեռախոսահամարը: Այդ դեպքում նշված հեռախոսահամարին ուղարկված կամ հաղորդած ցանկացած տեղեկություն համարվում է ընդունված կամ ստացված հասցեատիրոջ կողմից:

7. Վերանայել դատական ծախսերի բաշխման հետ կապված մի շարք կարգավորումներ.

Նախագծով սահմանվել են հաշտության համաձայնության, հայցային վաղեմության կիրառման դեպքերում դատական ծախսերի հատուցման կարգի հետ կապված նոր կարգավորումներ: Մասնավորապես, Նախագծով սահմանվել է համապատասխան կարգավորում, որի ուժով դատարանը առանձին հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում այդ մասով առանձնացնելով գործի վարույթը և առանձնացված մասով կայացնելով հայցը մերժելու մասին վճիռ, կարող է այդ գործով դատական ծախսերին անդրադառնալ նշված գործի քննության վերսկսված մասով կայացվելիք եզրափակիչ դատական ակտով:

8. Բոլոր դատական ատյանների կողմից դատավարական ժամկետները երկարաձգելու հնարավորության նախատեսում.

Օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կարող է երկարաձգել դատարանի սահմանած և չավարտված, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև օրենքով սահմանված և չավարտված դատավարական ժամկետները:

Սույն դրույթի մեկնաբանությունից հետևում է, որ Օրենսգրքով դատավարական ժամկետների երկարաձգման հնարավորություն տրված է միայն առաջին ատյանի դատարանին: Հաշվի առնելով, որ դատավարական ժամկետները կարող են երկարաձգվել նաև վերադաս դատական ատյանների կողմից՝ նախագծով առաջարկում է նշված հոդվածից հանել «Առաջին ատյանի» բառերը: Բացի այդ, սահմանվել են բացառիկ դեպքերում դատարանի նախաձեռնությամբ դատավարական ժամկետների ոչ ավելի քան երեք օրով երկարաձգման հնարավորություն:

9. Վերանայել առաջին ատյանի դատարանում հայցի հարուցման, գործի քննության նախապատրաստության, գործի դատաքննության փուլերում առկա թերի կարգավորումները, մասնավորապես՝

9.1. սահմանվել է, որ հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումները անվերապահ բեկանման հիմքերով վերադաս դատարանի կողմից վերացվելու դեպքում, առաջին ատյանի դատարանը կարող է կրկին անդրադառնալ հայցադիմումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերի առկայությանը,

9.2. սահմանվել են կարգավորումներ դատական նիստում և դատական նիստից դուրս ներկայացվող միջնորդությունների ներկայացման և քննարկման կարգի վերաբերյալ,

9.3. սահմանվել է, որ նոր պատասխանող ներգրավելու միջնորդության մեջ պետք է նշվեն նոր պատասխանող ներգրավելու հիմքերը և հիմնավորումները

10. Հստակեցնել արագացված դատաքննության կիրառման հիմքերը.

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձանց, վկաներին, փորձագետին կամ մասնագետին հարցաքննելու, ապացույցը գտնվելու վայրում հետազոտելու կամ դատական հանձնարարություններ տալու անհրաժեշտության բացակայության դեպքում առաջին ատյանի դատարանն իրավունք ունի կիրառելու արագացված դատաքննություն, եթե հայցն ակնհայտ անհիմն է: Մինչդեռ, դատական պրակտիկայում «Հայցն ակնհայտ անհիմն է» եզրույթը մեկնաբանվում է ոչ միանշանակ: Նշված խնդիրը լուծելու և դատական պրակտիկայի միասնականությունը ապահովելու նպատակով Նախագծով սահմանվել է, որ հայցն ակնհայտ անհիմն է, եթե դրանում ձևակերպված հայցապահանջն ակնհայտորեն ոչ իրավաչափ է (ակնհայտորեն ենթակա է մերժման անկախ դրա հիմքում դրված փաստերից), ներկայացվել է ոչ պատշաճ հայցվորի կողմից կամ ոչ պատշաճ պատասխանողի դեմ, կամ հայցվորի կողմից դրա հիմքում դրված փաստերի հիման վրա ակնհայտորեն ենթակա է մերժման (այսուհետ՝ ակնհայտ անհիմն հայց):

11. Նախատեսել Վերաքննության իրավունքի որոշ սահմանափակումներ՝ բեռնաթափելով վերաքննիչ դատարանին փոքր հայցապահանջներով գործերով կայացված դատական ակտերի վերանայումից՝ հաշվի առնելով նաև վերջին տարիներին կյանքի թանկացումը:

Գործող կարգավորմամբ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է գույքային պահանջով քաղաքացիական գործով, եթե տվյալ գործով վեճի առարկայի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոք բերող անձն իր վերաքննիչ բողոքում հիմնավորում է, որ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ:

Առաջարկվող կարգավորմամբ նախատեսվել է 50.000 դարձնել 250.000 դրամ: Գործող կարգավորումներով նախատեսված 50.000 դրամի շեմը տարիներ շարունակ չի վերանայվել և չի համապատասխանում արդի տնտեսական վիճակին: Փաթեթով 50.000-ի փոխարեն նախատեսվում է 250.000 դրամը, հաշվի առնելով վերջին տարիներին կյանքի թանկացումը:

Հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանը 18.07.2012թ. թիվ ՍԴՈ-1037 որոշման շրջանակներում անդրադարձել է Գույքային պահանջից ելնելով քաղաքացիական գործերով վերաքննության սահմանափակման հարցին, մասնավորապես նախկին Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցին, որը նախատեսում էր գործող Օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համանման կարգավորում, այն է՝ «Գույքային պահանջով քաղաքացիական գործերով վերաքննությունը թույլատրելի է միայն, եթե տվյալ գործով վեճի առարկայի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը»:

Սահմանադրական դատարանը նշված որոշման շրջանակներում արձանագրել է. «Ելնելով միջազգային դատավարական փորձի ուսումնասիրությունից և հաշվի առնելով վերը ներկայացված գործոնները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրո առարկա վեճի դեպքում այս կամ այն դրամական չափը որպես «ոչ մեծ» հայցապահանջների առավելագույն սահման դիտարկելու համար, մասնավորապես, հարկ է ելնել տվյալ սոցիալական իրականությանը բնորոշ չափանիշներից, **ինչպիսին, օրինակ, կարող է լինել երկրում քաղաքացիների միջին ամսական եկամտի, նվազագույն աշխատավարձի, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի հարաբերակցությունը:**

Նկատի պետք է ունենալ, որ, օրինակ, Հայաստանի Հանրապետությունում «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նվազագույն ամսական աշխատավարձը 32.500 դրամ է: Միաժամանակ, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 43.499.8 դրամ է: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն հափշտակության զգալի չափն սկսվում է հաշվարկային նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից (30.000 դրամից): Բոլոր դեպքերում բողոքարկման ոչ ենթակա գումարային սահմանի որոշումն օրենսդիր մարմնի իրավասության հարցն է, սակայն այն պետք է որոշվի նշված գործոնների հետ արդարացի և ողջամիտ հարաբերակցություն ապահովելու նպատակից ելնելով, միաժամանակ հաշվի առնելով արդարադատության սահմանադրաիրավական խնդիրները սոցիալական արդարության նպատակներին ծառայեցնելու անհրաժեշտությունը:»:

Վերը նշված դիրքորոշման շրջանակներում դիտարկելով կատարված փոփոխությունը հարկ է նշել, որ այժմ «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նվազագույն ամսական աշխատավարձը 75.000 դրամ է՝ նախկին 32.500 դրամի փոխարեն, երբ սահմանված է եղել նույն կարգավորումը: 2012 թվականին նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը կազմել է 43.499.8 դրամ է, իսկ այժմ այն կազմում է մոտ 77 հազար 740 դրամ: Հաշվի առնելով, նվազագույն ամսեկան աշխատավարձի չափի, սպառողական զամբյուղի բարձրացումը, կյանքի թանկացումը և բազմաթիվ այլ գործոններ, նախատեսված 50.000 դրամային շեմը այժմ չի ծառայում իր նպատակին***:***

12. Նախատեսել վերաքննիչ վարույթի կարճմանը հարցերի կարգավորմանը նվիրված առանձին կարգավորում.

Նախագծով Օրենսգրքի 373-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, որի արդյունքում նշված հոդվածի շրջանակներում կարգավորվել են բողոքից հրաժարվելու և բողոք բերողի մահվան դեպքերում վերաքննիչ վարույթի կարճման հետ կապված հարցերը:

13. Տեխնիկական բնույթի խնդիրներ պարունակող բողոքները Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների աշխատակազմի միջոցով վերադարձնելու կառուցակարգի ամրագրում.

Քաղաքացիադատավարական գործող կարգավորումների համաձայն՝ բողոքը Օրենսգրքով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում յուրաքանչյուր դեպքում ենթակա է վերադարձման դատարանի որոշմամբ: Նկատի ունենալով, որ գործնականում բազմաթիվ են այնպիսի իրավիճակները, երբ բողոքները ետ են վերադարձվում հիմնականում տեխնիկական բնույթի խնդիրների պատճառով (որպես օրինակ՝ բացակայում է հայցվորի անձը հաստատող փաստաթղթի պատճենը կամ բողոքի էլեկտրոնային կրիչը և այլն)՝ առաջարկում ենք վերադաս դատարաններին ևս առաջին ատյանի դատարանի օրինակով վերապահել տեխնիկական բնույթի խնդիրներ պարունակող բողոքները դատարանի աշխատակազմի միջոցով վերադարձնելու հնարավորություն:

14. Վերաքննիչ դատարանի որոշումը գործին մասնակից չդարձած անձի կողմից բողոքարկելու հնարավորության ընդլայնում.

Օրենսգրքի 389-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակից չդարձած անձինք վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն իրենց ներկայացրած վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված որոշման, իրենց ներկայացրած վերաքննիչ բողոքը վերադարձնելու, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու, իրենց ներկայացրած վերաքննիչ բողոքի հիման վրա հարուցված վերաքննիչ վարույթը կարճելու կամ գործի վարույթը կասեցնելու մասին որոշումների, ինչպես նաև սույն օրենսգրքի 383-րդ և 384-րդ հոդվածներով նախատեսված հարցերով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումների դեմ:

Օրենսգրքով կարգավորված չէ վերաքննության փուլում գործին մասնակից չդարձած անձի կողմից Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորությունը: Մասնավորապես՝ հնարավոր են դեպքեր, որ հենց Վերաքննիչ դատարանի որոշմամբ խախտվեն գործին մասնակից չդարձած անձի կամ անձանց իրավունքները:

Առաջարկվող կարգավորմամբ Վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքը լրացվել է դատավարության մասնակից չդարձված անձանցով, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ: Անհրաժեշտ է ընդգծել, որ վերջիններս վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք են ունենալու, եթե իրենց իրավունքները և պարտականությունները շոշափվել են վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտով: Նշված դեպքում նրանք վճռաբեկ դատարանում օգտվելու են երրորդ անձի իրավունքներից և կրելու են նրանց համար սահմանված պարտականությունները:

15. Վերանայել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցի լուծման կարգավորումը.

Առկա կարգավորումների համաձայն Վճռաբեկ դատարանում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը, ինչպես նաև վճռաբեկ բողոքը քննվում են Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի, իսկ հակակոռուպցիոն պալատում՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ: Առաջարկվող կարգավորմամբ նախատեսվում է ի տարբերություն Վճռաբեկ բողոքի քննության՝ Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծել նիստին ներկա դատավորների ձայների ընդհանուր թվի մեծամասնությամբ, քանի որ բացակայող դատավորների առկայության պայմաններում Վճռաբեկ դատարանը երբեմն չի կարողանում ապահովել ձայների մեծամասնություն բողոքի ընդունման հարցը ժամանակին լուծելու համար:

3. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունմամբ կստեղծվեն լրացուցիչ նախադրյալներ քաղաքացիական դատավարությունում մրցակցության, դատավարական խնայողության և գործի՝ ողջամիտ ժամկետում քննության սկզբունքների իրացման, ինչպես նաև գործերի քննության արդյունավետությունը և քաղաքացիական դատավարության կանխատեսելիությունը երաշխավորման համար:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից:

5. «Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ».

Նախագծերի ընդունումը բխում է 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1441-Լ Կառավարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից (Հավելված 1-ով հաստատված «Քաղաքացիական և քաղաքացիական

դատավարության օրենսդրության բարեփոխում» վերնագրված ռազմավարական 6-րդ նպատակի շրջանակներում), ինչպես նաև Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշումից: Մասնավորապես, նշված որոշման Հավելված 1-ում Արդարադատության նախարարության թիվ 6-րդ նպատակի («Դատավարական օրենսդրության վերանայում՝ իրավակիրառ պրակտիկայում ծագած խնդիրների լուծման և դատավարություններում էլեկտրոնային գործիքների ամբողջական ներդրման համար») միջոցառումների թվում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի վերանայմանն ուղղված օրենսդրական փաթեթի մշակումը: